armtown.com
ճշմարտությունն ազատեսցէ զձեզ

Armenian Online Dating and Chat FIND LOVE JOIN TODAY HyeSingles.com CONNECTING ARMENIANS WORLDWIDE
www.HyeSingles.com
Ads by Google

Google™ Custom Search
Search



Հրատարակվում է 2001

| << | Մարտ 2010 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ե | Ե | Չ | Հ | ՈՒ | Շ | Կ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 29 | 30 | 31 | | | | |

**Հրատարակված է Մարտ** 19, 2010 **բնօրինակը** © **Հետք**

# «ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԵԼ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»



«Այսօր համահայկական աշխարհում չկան արդի դարաշրջանի շնչին և զարգացումներին համապատասխան կրթօջախներ: Մեր դպրոցներից դուրս են գալիս ոչ մրցունակ և համաշխարհային կրթական չափանիշներին չհամապատասխանող երիտասարդներ: Հայ ժողովուրդը չունի մեկ միասնական պատկեր և գիտակցություն, թե ինչպիսի կրթական համակարգ է ուզում նա ունենալ: Թե՛ Հայաստանի, թե՛ սփյուռքի դպրոցները ետ են մնացել համաշխարհային զարգացումներից»,- այսօր «Հայելի»-ում ասաց «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի, «Վեմ» ռադիոկայանի ղեկավար, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մեսրոպ քահանա Արամյանը:

Ըստ նրա` հայ ժողովրդի շարունակությունը ապահովելու համար անհրաժեշտ են հզոր գաղափարներ և այդ գաղափարների իրագործման համար անհրաժեշտ միջավայր. «Դարեր շարունակ մեր ազգային գոյությունը խարսխվել է կրթության և հոգևոր արժեքների վրա»,- ասաց նա:

Ըստ քահանայի` այսօր մարդիկ եկել են համոզման, որ սեփական տաղանդին համապատասխան կրթական համակարգ և աշխարհի ցանկացած կետում հայ երեխաներին ու երիտասարդներին հայեցի կրթություն ստանալու հնարավորություն տալը մեր ժողովրդի գերխնդիրն է դարձել ստեղծել:

Հենց այստեղից էլ ծնունդ է առել 21-րդ դարի համահայկական դպրոցի ծրագիրը, որի նպատակն է ստեղծել միջավայր, որտեղ սովորելը դառնա ամեն հայի երազանքը և որից դուրս գալով` հայ երիտասարդները կարողանան նվաճել համաշխարհային ամենաբարձր գագաթները:

«Մելգոնյան դպրոցն իր կրթական ավանդներով, բազմամյա պատմությամբ և բարենպաստ աշխարհագրական տեղեկայվածությամբ այս ծրագրի իրականացման հնարավորություն է տալիս»,- նշեց Մեսրոպ քահանա Արամյանը:

2005թ Կիպրոսում փակվել է 1926թ հիմնադրված Մելգոնյան կրթական Հաստատությունը, չնայած 2004թ այն ուներ 250 աշակերտ: 2009թ նոյեմբերին ժնևում հավաքվեց Մելգոնյան կրթական հաստատության հիմքի վրա 21-րդ դարի համահայկական դպրոցի հիմնման նախաձեռնող խումբը:

Այժմ Մելգոնյան դպրոցի տեղում հունական դպրոց է, և ինչպես նշեցին նախաձեռնող խմբի անդամները` հույն երեխաները հայոց մեծերի կիսանդրիների վրա նկարում են: Տարածքը, որը այժմ վաճառքի է դրված, ի սկզբանե եղել է Պոլսո պատրիարքության ենթակայության ներքո,

am en

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ
Ա1+
Ազատ Արցախ
Ազգ
Առավոտ
Ազատություն
Արմենպրես
Երկիր
Կապիտալ
Հայոց Աշխարհ
Հետք նոր
Չորրորդ Իշխանութ.
Պանորամա
Պանարմենիան
Ժամանակ

ՕՆԼԱՅՆ ԼՈՒՐԵՐ
Օնլայն Ռադիո

ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
Եղանակ
Դրամի Փոխարժեք
Վիճակագրություն

ԻՄ ԱՐՄԹԱՈՒՆ
Կայքի Առօրյան
Ֆորում
Քվեարկություն
Լուրերի Էքսպորտ
Կոդավորվորիչ

Donate




Ինչպե՞ս թողնել ծխելը

որը հետո հանձնել է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությանը. «Ֆինանսական և զանազան այլ խնդիրների պատճառով որոշում է կայացվել վարժարանը փակել և այդ տարածքները վաճառել»,- նշեց Մեսրոպ քահանա Արամյանը:

Նախաձեռնող խմբի անդամները առաջարկում են Մելգոնյանի հիմքի վրա ստեղծել բարձորակ, նյութապես ամուր և առողջ կառավարման համակարգ ունեցող համահայկական օրինակելի դպրոց:

«Վերաբացման համար բավականին լուրջ դրամական հիմք է այժմ հավաքված: Պետք է ստեղծվի համապատասխան մեխանիզմ, որպեսզի տաղանդավոր երեխաների կրթաթոշակավորման ինստիտուտը Հայաստանում աշխատի, ինչն աշխարհում լայնորեն տարածված է»,- Մեսրոպ քահանա Արամյանը:

Նախաձեռնող խումբը միավորում է զանազան գործարարների Կիպրոսից, Ռուսաստանից, Հայաստանից, որոնք պատրաստակամ են ներդրում կատարելու Մելգոնյան կրթական հաստատության վերաբացման պարագայում:

Եթե ֆինանսական առումով խնդիրները լուծված են, ապա նույնը չի կարելի ասել իրավական խնդիրների մասին. «Իրավաբանական կարգավիճակը դեռևս լուծված չէ, կադաստրում տարածքի տերը Կիպրոսի պետությունն և ՀԲԸՄ-ն է, այնտեղ կա ևս երկու դպրոց: Թող դա լինի Բարեգործականի սեփականությունը, և նրանք դա տան նրան, ում վստահում են»,- նշեցին բանախոսները:

«Հանրապետական դպրոցի ստեղծման գաղափարն այդ դպրոցի կենտրոնական գաղափարն է: Մելգոնյանը հույս մեր երիտասարդների համար: Մելգոնյանի կյանքը ուղղակի կապված է մեր կրթական կյանքի մտածողության հետ: Այն մեր գոյության համար ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր է»,- նշեց նախաձեռնող խմբի անդամներից Կարապետ Տաթէսեանը:

Բանախոսները հավաստիացրին, որ Մելգոնյանի տված կրթությունը ունեցել է շատ բարձր մակարդակ, այնտեղի ուսանողները ընդունվել են Օքսֆորդի, Քեմբրիջի, Հարվարդի համալսարաններ: Այն հիմնականում եղել է ավագ դպրոց:

Մելգոնյանի հիմքի վրա համահայկական դպրոց իրագործման ծրագրի սկզբունքներից են այն, որ դպրոցը կառավարվում է կրթության կառավարման փորձառություն ունեցող կազմակերպության կողմից:

Կրթությունը կազմակերպվում է ըստ մշակված ուսումնական ծրագրի` հիմնված համաշխարհային բարձրագույն չափանիշների և կրթական նորագույն տեխնոլոգիաների խթանման վրա, ուսուցչական կազմը ընտրվելու է ըստ միջազգային որակավորման, իսկ երեխաների ընտրությունը` հիմնված նրանց տաղանդի, գիտելիքների վրա: Անվճարունակ երեխաների համար սահմանվում են անհատական և կազմակերպական կրթաթոշակներ:

Հայերը Կիպրոսում եղել են 7-րդ դարից և այնտեղ համարվում են ազգային փոքրամասնություն, որոնց իրավունքները պահպանված են այդ երկրի սահմանադրությամբ: Այսօր Կիպրոսում տարբեր ազգություններ կան, իսկ հայերը` 2000-ից-3000 են:

«Արևմտահայկական լեզուն պետք է պահպանվի ու զարգանա: Եվ Կիպրոսն է լիազորված այդ գործը կատարելու»,- ասաց նախաձեռնողներից Մարտիրոս Մինասեանը: «Մենք պետք է պահպանենք սփյուռքյան իրականությունը, որպեսզի ուժեղացնենք հայրենիքը»,- նշեց նախաձեռնող խմբից Արդէն Ծելեֆեանը:

Եթե բանակցային գործընթացն ավարտվի և դրական ելք ունենա, ապա նախևառաջ արդիականացվելու են պայմանները և կրթության որակը: Բանախոսները հույս հայտնեցին, որ սեպտեմբերին կրթօջախի աշխատանքները կսկսվեն:

*Ինգա Մարտինյան*

Ինչպե՞ս գրել Հայերեն Windows XP միջավայրում

<< | Սկիզբ | >>

Ուղարկել հոդվածը | Քննարկել հոդվածը

**Վերջին լուրերը**, **Մարտ** 19, 2010 RSS © **Հետք**

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ


Իրենք իրենց են զսպում «Ես հակառակը կասեմ` մենք մեր ձեռքով հենց մեզ ենք զսպում, իշխանությունը իր ձեռքով ինքն իրեն է զսպում»,- անդրադառնալով մամուլին վերաբերող վերջին օրինագծին` հայտարարել է ՀՀԿ փոխնախագահ ...

## ՆՈՏԱՐԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԿՆՔԵԼ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

«Օլիմպ» ԱԿ-ին պատկանող Միլանո խանութի վտարման գործողությունները սկսվեցին անսպասելի, առանց զգուշացման և գործունեությունը տեղափոխելու համար անհրաժեշտ ժամանակ տրամադրելու: Վտարման համար հիմք էր ծառայում ...

## ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր Սիմոնյանը: Հանձնաժողովը քննարկել է ...

## «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻԱԿ ԵՐԿԻՐՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ, ՈՐՏԵՂ ՈՉ ՄԻ ԴԱՏ ՉԵՂԱՎ»

Սոնա Ավագյան 1


Ի՞նչը կլինի Հայաստանի վերջը` ըստ Հրանտ Բագրատյանի «Ազատության» կուսակցության նախագահ, ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանն այսօր կազմակերպված մամուլի ասուլիսին կարծիք հայտնեց, որ Հայաստանը 2010 թ. առաջին ...

## «ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԵՆՔ ԱՌԵՒՏՐԻ ՉԵՆՔ ԳՆԱԼՈՒ»

Անի Հովհաննիսյան


Այսօր ԱԺ Հանրապետական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը «Փաստարկ» ակումբում խոսեց տարածաշրջանային գործընթացների` մասնավորապես հայ-թուրքական հարաբերությունների մասին: ՀՀԿ խմբակցության ղեկավարն իր ...

**ArmenianBD.com (New)**
Armenian Job & Housing Directory! Get Info on Armenian Businesses
ArmenianBD.com
Ads by Google

## ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ. «ՀՐԱԺԱՐՎԵԼՈՎ ԼՂ-Ի ՀԵՏ ԲԱՆԱԿՑԵԼՈՒՑ` ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՐԳԵԼԱԿՈՒՄ Է ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ»


«Պարոն Մամեդյարովը ներկայացրել է լրագրողներին, թե ինչ արդյունքների կարող է հասնել, եթե բանակցությունները վարի ինքն իր հետ, և եթե միայն Ադրբեջանը մշակի, եւ Ադրբեջանը ինքն իր հետ ստորագրի խաղաղության պայմանագիրը: ...

## ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԸ ԾԱՌԱՅՈՒՄ Է ՈՐՊԵՍ ԱՎՈՏԿԱՅԱՆԱՏԵՂ

Արման Ղարիբյան


Իսահակյան 38 շենքի բնակիչներից մեկը «Հետքին» ահազանգել էր, որ շենքի երեխաների խաղահրապարակը, որը քաղաքապետարանը վերանորոգել էր նախորդ ամռանը, ծառայում է որպես ավտոմեքենաների կայանատեղի: Օրվա տարբեր ժամերին ...

### ԴԵՂԵՐ ԿԵՂԾՈՂՆԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՆ ԱԱԾ-Ի ԿՈՂՄԻՑ



ԱԱԾ մարմինների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել և կասեցվել է դեղերի պիտանելիության ժամկետների փոփոխմամբ, ինչպես նաև դեղերի կեղծմամբ և վաճառքով զբաղվող անձանց ...

### ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ 10 ԴԵՊՔ



Ըստ ՀՀ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի` 2010 թվականի մարտի 1-ից 19¬ն ընկած ժամանակահատվածում ՀՀ տարածքում արձանագրվել է կաշառակերության 10 դեպք, որոնք բացահայտվել են: Նույն ժամանակահատվածում ...

### «ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Ինգա Մարտինյան



«Այսօր համահայկական աշխարհում չկան արդի դարաշրջանի շնչին և զարգացումներին համապատասխան կրթօջախներ: Մեր դպրոցներից դուրս են գալիս ոչ մրցունակ և համաշխարհային կրթական չափանիշներին չհամապատասխանող երիտասարդներ: ...

ArmenianBD.com (New)
Armenian Job & Housing Directory! Get Info on Armenian Businesses
ArmenianBD.com

Ads by Google

### ԿԱՅՔ ԳՅՈՒՂԻ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ ԴՈՒՅԼԵՐՈՎ ՋՈՒՐ ՏԱՆԵԼՆ Է

Գրիշա Բալասանյան



Արագածոտնի մարզի գրեթե բոլոր գյուղերն իրար նման են` քանդված ճանապարհներ, հին տներ, վատ կենցաղով ապրող գյուղացիներ եւ այլն: Մարզի Կայք գյուղի (Մուլքի) ճանապարհով անցնելիս նկատեցինք, որ մի պապիկ պլաստմասե ...

### ԹԻՐԱԽՈՒՄ ԴԱՐՁՅԱԼ ՖՈՏՈԼՐԱԳՐՈՂ ՇԱՄՇՅԱՆՆ Է

Արարատ Դավթյան



Այսօր Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանում, երբ նիստերի դահլիճ են բերել Հայաստանի Մաքսային կոմիտեի նախկին պետ Արմեն Ավետիսյանի տան վրա կատարված ավազակային հարձակման գործով մեղադրյալներին, ...

### Ո՞Վ ԿԱՐՈՂ ԷՐ ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԸ 20 ԱՆԳԱՄ ՊԱԿԱՍԵՑՆԵԼ

Արարատ Դավթյան

Բնապահպանական պետական տեսչության պետի արդեն նախկին տեղակալ Արսեն Պետրոսյանի գլխավորությամբ անցյալ տարվա հոկտեմբերին «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ում անցկացվել են ստուգումներ, որի արդյունքում ...

### ԱՆՎՃԱՐ ԵՐԹԵՒԵԿՈՒԹՅՈՒՆ` ԱՆՎՃԱՐ ՍՆՈՒՆԴ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ



Կապանի համար 13 մանկապարտեզի շենքում տեղակայված «Առաքելություն Հայաստանի» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանից օգտվում են ոչ միայն մանկապարտեզի շրջակա բնակավայրերի (Ձորք թաղամաս), այլեւ ...

### «ԷՆՔԱ¬Ն ՑԻՆԻԿ ԵՆՔ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՁԵԶ, ՈՐ ՀԱՇՎԱՐԿ ԱՆԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԵՆՔ»

Սոնա Ավագյան

Ըստ Հ. Բագրատյանի` Հայաստանի նախաձեռնողական քաղաքականությունից հետո Թուրքիայի հետ հարաբերությունները է՛լ ավելի են վատացել «Բիզնես չկա էլ, բայց այն, ինչ կա, կարող է նույնիսկ ավելի տուժել, եթե սկզբնական ...

### ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԳՅՈՒՂԱՑԻՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԻ ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԵՏ»

Վարչապետ Տիգրան Սարգսյանն այսօր մեկնել է Արմավիրի մարզ գործող



սպառողական կոոպերատիվների աշխատանքներին ծանոթանալու նպատակով: Վարչապետին ուղեկցել են ՀՀ Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանն ու գյուղատնտեսության ...

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ



Այսօր տեղի է ունեցել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հերթական նիստը: Հանձնաժողովը քննարկել է նաև «Բիսկվիտ-Շոկոլադ» կորպորացիայի (որի մեջ է մտնում «Խարկովսկայա բիսկվիտնայա ...

## ԴԵՂՈՐԱՅՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒՅԹԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է

Այսօր տեղի է ունեցել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հերթական նիստը, որի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր: Հանձնաժողովի որոշմամբ, դեղորայքի շուկայում գործող մի շարք ընկերությունների ...

## ՍԿՍՎԵՑ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՏԱՆ ՎՐԱ ԱՎԱԶԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ



Սոնա Մաշուրյան Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանում՝ դատավոր Մնացական Մարտիրոսյանի նախագահությամբ  այսօր սկսվեց Հայաստանի Մաքսային կոմիտեի նախկին պետ Արմեն Ավետիսյանի տան վրա  ...

## ԱՆՎՃԱՐ ԵՐԹԵՒԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ԱՆՎՃԱՐ ՍՆՈՒՆԴ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ



Կապանի  համար 13 մանկապարտեզի շենքում տեղակայված «Առաքելություն Հայաստանի» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանից օգտվում են ոչ միայն մանկապարտեզի շրջակա բնակավայրերի (Ձորք թաղամաս), այլեւ ...

**Նմանատիպ հոդվածներ** (**վերջին** 7 **օրվա**) **նոր**

## ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒ՞Ն ԹԵ՞ «ԻՇԽԱՆԱՏԻՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ԿԱՄ ԻՆՉՈՒ Է ԱԿՏԻՎԱՆՈՒՄ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԸ

Գեւորգ Դարբինյան

## ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԸ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԾԻՔ Է ՁԵՒԱՎՈՐՈՒՄ

Արման Ղարիբյան

## ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՍԼԱՔԸ՝ ՄԵԿ ԺԱՄ ԱՌԱՋ

## ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՍԼԱՔԸ՝ ՄԵԿ ԺԱՄ ԱՌԱՋ

## ԱՐՏԱՎԱԶ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԸ ՍՊԱՍՈՒՄ Է ԻՐ ՀԵՐԹԻՆ

Քրիստինե Աղալարյան

**Առավել ընթերցված հոդվածները** (**վերջին** 7 **օրվա**) RSS © **Հետք**

## ՀԱՅ ԴԱՍԱԽՈՍԸ ԱՄՆ-ՈՒՄ ԴԱՐՁԵԼ Է ՇԱԽՄԱՏԻ ՉԵՄՊԻՈՆ

Գրիշա Բալասանյան

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԼՈՒՐԸ ՀԱՎԱՍՏԻ Է

## ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ՀԻԼԱՐԻ ՔԼԻՆԹՈՆԻ ՀԵՏ

## «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻԱԿ ԵՐԿԻՐՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ, ՈՐՏԵՂ ՈՉ ՄԻ ԴԱՏ ՉԵՂԱՎ»

Սոնա Ավագյան

- ՓՈՔՐԻԿ ԱՆԳԵԼԻՆԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ
  Անահիտ Դանիելյան
- ԹՈՒՐՔԻԱՆ ԵՏ Է ԿԱՆՉԵԼ ԻՐ ԴԵՍՊԱՆԻՆ
- ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
- ԲՆԱՓԱՅՏ՝ ՉՈՐՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
- ՀԱՐԳԱՆՔՈՎ ՈՒ ՀԻԱՑՄՈՒՆՔՈՎ ՀԵՏԵՒՈՒՄ ԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՋԱՆՔԵՐԻՆ

**Այսօրը Հայաստանի պատմությունում** © ՀԱՀ

- 1913 Թուրքիայի Բաֆրա քաղաքում ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանաստեղծուհի Մառի Աթմաճյանը: Եղել է ֆրանսահայ գրողների միության նախագահը:
- 1924 Թիֆլիսում ծնվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, հայազգի կինոռեժիսոր Լև Կուլիջանովը:
- 1924 Ծնվեց հայ դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը:
- 1959 Մահացավ խմբապետ Մուշեղ Ավետիսյանը (Սասունցի Մուշեղ):
- 1993 Միջպետական հարաբերությունների հիմնադրույթների մասին պայմանագիր ստորագրվեց Հայաստանի և Ղրղզստանի միջև:

**Ֆորումի ակտիվ քննարկումները** ֆորում…

- Աղմին, շնորհավոր
- Make 3500$+ PER month guaranteed! With surveys for money!
- Make 3500$+ PER month guaranteed! With surveys for money!
- Հանապազօրյա Նավթը և Հայաստանի Աշխարհաքաղաքական Դիրքը
- ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻՆ ՈՒԺՈՒՄ ԵՆ «ԿԼՊԵ՞Լ»
- Ինչ է Կրոնը? What Is Religion?
- Մեզ շատ դուր եկած հոդվածները
- The paradox of our time
- EuArmenia
- Ինչպես վերականգնել (recover) համակարգիչը

**Ձեր կարծիքը** հարցախույզ…

Ներկայումս չկա ակտիվ հարցախույզ: Այցելեք քվեարկված հարցախույզների արխիվը

© 2010 Արմթաուն

Սույն կայքում հրատարակված նյութերը վերցված են բաց աղբյուրներից և պաշտպանված են հեղինակային իրավունքիով: Արգելված է սույն կայքում հրատարակված նյութերի վերարտադրումը առանց իրական հեղինակի գրավոր թույլտվության: Եթե ցանկանում եք հանել Ձեզ պատկանող նյութը, ապա ուղարկեք մեզ, պատկանելությունը վկայող փաստեր և տվյալ նութը անմիջապես կհանվի: Բոլոր նյութերը հրատարակված են միայն ինֆորմացիոն նպատակով և մենք պատասխանատու չենք դրանց հավաստիության համար:

You must set the ad network .txt file to be writable (or file is not within path).